ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն աշխատակարգը սահմանում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի (ԴՄ) իրավասությունները, նիստերի գումարման, անցկացման, քվեարկության, եզրակացության, հայտարարության կամ փորձագիտական կարծիքի ընդունման կարգը:

1.2. Դիտորդ մարմինն ինքն է հաստատում իր աշխատակարգը, դրանում կատարում փոփոխություններ եւ լրացումներ:

1.3. ԴՄ աշխատակարգն ու դրանում կատարված փոփոխությունները եւ լրացումները ուժի մեջ են մտնում ընդունման պահից, ապա վավերացվում են Ինքնակարգավորման նախաձեռնության (ԻՆ) առաջին իսկ համաժողովում:

1.4. ԴՄ աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են ԶԼՄ-ների Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների, նախաձեռնությանն աջակցող կազմակերպությունների եւ այլ շահագրգիռ անձանց ներդրումների ու տրամադրած միջոցների հաշվին, որոնց վերաբերյալ տեղեկություն է ներկայացվում Ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում:

2. Դիտորդ մարմնի կառուցվածքը եւ իրավասությունները

2.1. ԴՄ անդամներն ընտրվում են Ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում՝ մինչեւ հաջորդ տարեկան համաժողով:

2.2. ԴՄ-ն ունի 14 անդամ, որոնք ներկայացնում են լրատվամիջոցների ղեկավար կազմը, լայն հասարակությունը եւ լրագրողական մասնագիտական հանրությունը:

2.3. Հաշվետու տարվա ընթացքում ԴՄ նիստերի կեսի ավելիին չմասնակցած ԴՄ անդամի նկատմամբ ռոտացիա է կիրառվում, եթե նա չի մասնակցել նաեւ ԴՄ պատրաստած փաստաթղթերի մշակմանը, հետնիստային քննարկումներին էլեկտրոնային նամակագրությամբ կամ ԴՄ սոցցանցային հարթակում:

2.4. ԴՄ-ն կարող է ունենալ նախագահ, որը՝

ա. իրականացնում է ԴՄ աշխատանքների ընդհանուր ղեկավարումը,
բ. նախագահում է ԴՄ նիստերը,

գ. ԴՄ-ն ներկայացնում է տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում,
դ. ԴՄ անունից տարածում է հայտարարություններ եւ ուղերձներ։
ե. ԴՄ նախագահի բացակայության դեպքում ԴՄ նիստերը նախագահում է ԴՄ տարիքով ավագ անդամը։

2.5. ԴՄ-ն կարող է ունենալ համակարգող, որի հիմնական գործառույթը դիմում-բողոքներն ընդունելը, ԴՄ նիստերը կազմակերպելը, փորձագետների եւ գործընկեր կառույցների ներգրավմամբ ընդունվելիք փաստաթղթերի նախագծերն ու նիստում քննարկումների եւ առաջարկների հիման վրա դրանց վերջնական տարբերակները պատրաստելն է։

3. Դիտորդ մարմնի իրավասությունները եւ որոշումներ ընդունելու կարգը

3.1. Դիտորդ մարմինը՝

ա. ընդունում եւ քննում է ԶԼՄ-ների կողմից Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի (հետագա տեքստում՝ Կանոնագիր) խախտման վերաբերյալ բողոքները,
բ. քննության արդյունքներով ընդունում եւ հրապարակում է եզրակացություն կամ փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ,
գ. իր նախաձեռնությամբ կարող է Կանոնագիրը ստորագրած ԶԼՄ որեւէ հրապարակման քննություն իրականացնել, եթե նկատում է էթիկական խախտում, եւ եթե հրապարակումը հանրային հնչեղություն է ստացել. նման քննություն սկսելուց առաջ տեղեկացնում է տվյալ լրատվամիջոցին եւ նրբանկատություն է դրսեւորում անձանց մասնավոր կյանքի նկատմամբ,
դ. իր նախաձեռնությամբ կարող է Կանոնագրի հիման վրա իրականացնել ԶԼՄ-ների գործունեության դիտարկում եւ հրապարակել դրա արդյունքները,
ե. Կանոնագրի դրույթների հիման վրա մշակում է ուղեցույցներ,
զ. հանրային նշանակություն ունեցող եւ լրատվամիջոցների գործունեությանն առնչվող խնդիրների վերաբերյալ հանդես է գալիս հայտարարություններով,
է. իրականացնում է իր լիազորություններից եւ Կանոնագրից բխող այլ գործառույթներ։

3.2. Դիտորդ մարմինն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, ԴՄ 14 անդամից առնվազն 7-ի մասնակցությամբ։

3.3. Նիստին մասնակցելու անհնարինության դեպքում ԴՄ անդամը որոշումների կայացման համար իր քվեարկելու իրավունքը կարող է լիազորել ԴՄ այլ անդամի։

3.4. ԴՄ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե սույն Աշխատակարգով կամ ԴՄ տվյալ նիստի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել։

3.5. ԴՄ-ում քննարկվող որեւէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն կամ շահերի բախում ունեցող ԴՄ անդամը, առաջնորդվելով ԴՄ անդամի Վարքականոնի 1.4 եւ 1.5 դրույթներով, պարտավոր է քննարկումից առաջ այդ մասին տեղեկացնել ԴՄ համակարգողին՝ հրաժարվելով տվյալ նիստին մասնակցելուց։

4. Դիտորդ մարմնում բողոքներն ընդունելու կարգը

4.1. Անձինք եւ կազմակերպությունները ԶԼՄ-ների հրապարակումների դեմ ԴՄ-ին բողոք կարող են ներկայացնել տվյալ հրապարակման օրից հետո երեք ամսվա ընթացքում։

4.2. ԴՄ-ում բողոքի քննության եւ եզրակացության կամ փորձագիտական կարծիքի ընդունման առավելագույն ժամկետը երկու ամիսն է։

4.3. Անձին կամ կազմակերպությանը վերաբերող եւ ենթադրաբար նրանց իրավունքները խախտող հրապարակումների դեմ բողոքով ԴՄ-ին կարող են դիմել միայն տվյալ անձը, կազմակերպությունը, նրանց լիազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կամ տվյալ ոլորտում մասնագիտացած ՀԿ-ն, եթե բողոքը վերաբերում է իրենց շահառուին առնչվող հրապարակումներին։

4.4. ԴՄ-ն, որպես կանոն, քննարկման չի ընդունում անձին կամ կազմակերպությանը վերաբերող եւ ենթադրաբար նրանց իրավունքները խախտող հրապարակումների դեմ երրորդ անձանց բողոքները։

4.5. Բողոքը ստանալուց հետո ԴՄ համակարգողը դիմողին իրազեկում է քննության ժամկետների ու ընթացակարգերի մասին։ ԴՄ համակարգողը բողոքի ստացման մասին տեղեկացնում է նաեւ տվյալ լրատվամիջոցին՝ խնդրելով բողոքի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները ներկայացնել, եթե այդպիսիք կան։

4.6. Տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների գործունեությանը վերաբերող էթիկական խնդիրների առնչությամբ պատշաճ դիմող է ճանաչվում Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը («Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի իմաստով)՝ որպես ոլորտը կարգավորող պետական մարմին, որը լիազորված է նաեւ հետեւելու այդ ԶԼՄ-ների մասնագիտական էթիկայի նորմերի պահպանմանը։ ՀՌՀ-ից ստացված դիմումները քննվում են գործող ընթացակարգով, ինչի արդյունքում, եթե վեճը վերաբերում է Կանոնագիրը ստորագրած հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, ԴՄ-ն տրամադրում է եզրակացություն, իսկ մյուս դեպքերում՝ փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ։

4.7. Այն դեպքում, երբ բողոք ներկայացնող անձը Դիտորդ մարմնին դիմելուն զուգահեռ նույն հիմքով դիմում է դատարան, եւ դատաքննության ընթացքում կարող են ի հայտ գալ ԴՄ որոշման վրա ազդեցություն ունեցող փաստեր, հանգամանքներ, ԴՄ-ն կասեցնում է բողոքի քննությունը՝ մինչեւ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը։ ԴՄ-ն վերսկսում է բողոքի քննությունը, եթե իր եզրակացությունը կամ փորձագիտական կարծիքը լրացուցիչ նշանակություն ունի անձի տեղեկատվական իրավունքների պաշտպանության տեսակետից։

5. Դիտորդ մարմնում բողոքները քննելու, եզրակացությունները կամ փորձագիտական կարծիքները մշակելու, հաստատելու եւ հրապարակելու կարգը, ԴՄ հայտարարությունները

5.1. Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ ԶԼՄ-ների դեմ բողոքի քննությունը սկսելուց առաջ ԴՄ-ն բողոքը ներկայացնող անձին առաջարկում է անմիջապես դիմել տվյալ նյութը հրապարակած լրատվամիջոցին կամ ինքն է իր նախաձեռնությամբ դիմում տվյալ ԶԼՄ-ին՝ առաջարկելով վեճը լուծել պատասխան կամ հերքում հրապարակելով կամ ենթադրյալ խախտումը այլ կերպ վերացնելով։

5.2. Սույն հոդվածի 5.1. կետով նախատեսված դեպքերում տվյալ ԻՆ անդամ ԶԼՄ-ին դիմելուց բողոքարկող անձի հրաժարվելու կամ ենթադրաբար խախտում թույլ տված ԶԼՄ-ից պատասխան չստանալու դեպքում ԴՄ-ն իրականացնում է քննություն եւ դրա հիման վրա ընդունում եզրակացություն։

5.3. ԻՆ անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում: Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ-ի համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում ԻՆ ոչ անդամների հրապարակումների վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունել եւ հրապարակել փորձագիտական կարծիք կամ հայտարարություն:

5.4. ԴՄ-ն քննության է առնում տեղեկատվության ոլորտում պաշտոնապես գործունեություն իրականացնողների մասնակցությամբ տեղեկատվական վեճերը եւ ըստ անհրաժեշտության հանդես է գալիս հայտարարությամբ կամ հրապարակում է փորձագիտական կարծիք:

5.5. Դիտորդ մարմնի եզրակացություններն ու փորձագիտական կարծիքներն ընդունվում են Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի, ՀՀ իրավական ակտերի, ինչպես նաեւ միջազգային իրավական ակտերի եւ դատական նախադեպերի հիման վրա: Եթե բողոքի քննությանը մասնակցած որեւէ ԴՄ անդամ համաձայն չէ ընդունված եզրակացությանը կամ փորձագիտական կարծիքին, ապա կարող է որոշման վերջում ավելացնել իր հատուկ կարծիքը:

5.6. ԻՆ անդամները, Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով ստանձնած պարտավորության համաձայն, Կանոնագրի խախտումների վերաբերյալ Դիտորդ մարմնի եզրակացության՝ խախտմանը վերաբերող հատվածներն առանց մեկնաբանությունների պետք է հրապարակեն իրենց լրատվամիջոցում եւ այդ մասին տեղեկացնեն ԴՄ-ին՝ կցելով հրապարակման հղումը:

5.7. ԴՄ եզրակացություններն ու փորձագիտական կարծիքներն ուղարկվում են գործով ներգրավված կողմերին, նաեւ կարող են հրապարակվել լրատվամիջոցներում եւ այլ հրապարակային հարթակներում:

5.8. Խոսքի ազատության, մասնագիտական էթիկայի խախտումների տեսակետներից մտահոգություն առաջացնող, լրատվական միջավայրում տարածում ունեցող ընդհանուր երեւույթների ի հայտ գալու դեպքերում Դիտորդ մարմինը կարող է հանդես գալ հայտարարություններով:

6. Դիտորդ մարմնի եզրակացությունները չհրապարակելու կամ դրանցից շարունակաբար հետեւություններ չանելու համար ԻՆ անդամների պատասխանատվությունը, անդամության առկախումը

6.1. Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ լրատվամիջոցի կողմից ԴՄ ընդունած եզրակացությունը չհրապարակելու դեպքում տվյալ ԶԼՄ-ն նախազգուշացվում է այդ մասին:

6.2. Սույն հոդվածի 6.1 կետով նախատեսված նախազգուշացումից հետո էլ եզրակացությունը չհրապարակելու կամ եզրակացություններից շարունակաբար հետեւություններ չանելու դեպքերում ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնությանը տվյալ լրատվամիջոցի անդամությունը կասեցվում է ԴՄ կողմից:

6.3. Եթե մինչեւ ԻՆ առաջիկա համաժողովը տվյալ ԶԼՄ-ն չի վերացնում ԴՄ կողմից անդամության կասեցման պատճառները, ապա համաժողովում դրվում է Ինքնակարգավորման նախաձեռնությանն այդ ԶԼՄ-ի անդամության դադարեցման հարցը:

6.4. ԻՆ անդամությունը կասեցնելու մասին որոշումը կայացրած ԴՄ նիստի եւ Համաժողովի միջեւ ընկած ժամանակահատվածում տվյալ ԶԼՄ-ն Դիտորդ մարմնի որոշմամբ հնարավորություն ունի վերականգնելու իր անդամությունը՝ կասեցման պատճառները վերացնելով եւ դրա մասին տեղեկացնելով հանրությանը՝ Դիտորդ մարմնի հետ համաձայնեցված տեքստով։

6.5. Լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության եւ լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմնի հետ Նախաձեռնության նախորդ համաժողովից հետո, առնվանզ մեկ տարվա ընթացքում, այս կամ այն պատճառով աշխատանքային կապի բացակայության հիմքով, Նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների անդամակցությունը համարվում է առկախված։ Կանոնավոր գործունեությունը եւ ԻՆ աշխատանքներին մասնակցությունը վերականգնելու պարագայում այդ լրատվամիջոցներին ինքնաբերաբար տրվում է լիակատար անդամակցությունը վերահաստատելու հնարավորություն։

7. Լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմինը միջազգային համագործակցության ասպարեզում

7.1. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը Եվրոպայի անկախ մամուլի խորհուրդների ալյանսի (Alliance of Independent Press Councils of Europe), ինչպես նաեւ ինքնակարգավորման մարմինների ցանցի անդամ է։

7.2. Դիտորդ մարմինը կարող է բողոքներ ընդունել այլ երկրների ԶԼՄ-ների կողմից լրագրողական էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ, եթե ունի տվյալ երկրի ինքնակարգավորման մարմնի հետ երկկողմանի կամ բազմակողմանի համագործակցության պայմանավորվածություն։ Դիմողի պատշաճությունը հաստատելու եւ բողոքը հիմնավորված համարելու դեպքում ԴՄ-ն բողոքը հասցեագրում է գործընկեր երկրի ինքնակարգավորման մարմնին։

7.3. Այլ երկրների ԶԼՄ-ների կողմից միջպետական կամ ազգամիջյան հարաբերությունների հետ կապված լրագրողական էթիկայի կանոնների խախտման եւ տվյալ երկրի ինքնակարգավորման մարմնի հետ երկկողմանի կամ բազմակողմանի համագործակցության մասին պայմանավորվածությունների առկայության դեպքում Դիտորդ մարմինն իր նախաձեռնությամբ կարող է բողոք ներկայացնել համապատասխան ինքնակարգավորման մարմնին կամ առկա ցանցային կառույցին։

Սույն աշխատակարգն ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2018թ. մարտի 16-ի նիստում։
Աշխատակարգը՝ փոփոխություններով եւ լրացումներով, վավերացվել է
Ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում,
2026 թվականի հունիսի 27-ին։